Հայաստան համահայկական հիմնադրամ
գործադիր վարչություն
Hayastan All-Armenian Fund
Executive Board

ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,
«Հայաստան» համահայկական հիմնադրամ
Հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ: + (374 10) 521505
pr@himnadram.org
www.himnadram.org

Մամլո հաղորդագրություն

Հեռուստամարաթոն 2014-ի նվիրատվություններով կամբողջականացվի Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի վերակառուցումը

Երեւան, 10 նոյեմբերի, 2014թ.: Նոյեմբերի 27-ին անցկացվելիք՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հեռուստամարաթոն 2014 համազգային դրամահավաքի հանգանակությունները կուղղվեն Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի ամբողջական վերակառուցմանը, որը կիրականացվի ծրագրի երկրորդ փուլով:

2013թ-ին նվիրաբերված գումարներով ընթացիկ տարում իրականացվել են լայնածավալ հողային աշխատանքներ, որոնք կավարտվեն տարեվերջին: Շուրջ 116 կմ երկարությամբ ավտոճանապարհն ունի 10 մետր լայնություն, որից 7 մետրը կկազմի ասֆալտապատ երթեւեկելի հատվածը: Կատարված աշխատանքները ներառում են ողջ ճանապարհի երկայնքով ջրահեռացման խողովակների տեղադրում, ինժեներական ցանցերի, ափապաշտպան եւ արգելապաշտպան կառույցների իրականացում, հենապատերի ու եզրաքարերի կառուցում, 17 մեծ ու փոքր կամուրջների կառուցում ու վերանորոգում: Բնակավայրերով անցնող հատվածներում կառուցվում են մայթեր:

Վարդենիս-Քարվաճառ ճանապարհահատվածի առաջին շուրջ 12 կմ-ը ասֆալտապատ է: Հաջորդող հատվածը մինչեւ Մարտակերտ պատված է խտացված հողային պաստառով եւ երթեւեկելի է նաեւ մարդատար մեքենաների համար: Առաջիկա դրամահավաքի գումարներով կավարտվի վերակառուցման երկրորդ փուլով նախատեսված ասֆալտապատումը:

Վարդենիս-Մարտակերտ ճանապարհի կառուցումը՝ որպես ռազմավարական ծրագիր հաստատված «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, այլընտրանքային կապ կհաստատի մեր երկու հանրապետությունների միջեւ: Նոր մայրուղին ոչ միայն կաշխուժացնի ճանապարհի երկայնքով տարածվող 22 մեծ ու փոքր համայնքների կյանքը, այլեւ կխթանի զբոսաշրջությունը եւ մեծ հաշվով կնպաստի մեր երկրների տնտեսության առաջխաղացմանը:

Խոշորածավալ այս ծրագիրն ավարտին հասցնելու նպատակով Հիմնադրամի աշխարհասփյուռ գրասենյակներն իրենց համայնքներում իրազեկման եւ դրամահավաք աշխատանքներ են տանում դեռ տարեսկզբից:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնվել է 1992թ. մարտի 3-ին՝ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում բարեսիրական օգնության եւ ենթակառուցվածքների զարգացման նպատակով: Այն աշխարհում ներկայանում է իր 25 գրասենյակներով:

Նոյեմբերի 1-ից էլ Հայաստանում մեկնարկել են փոստային եւ sms նվիրատվությունները, որոնք նպատակ ունեն ազգային նշանակության այս ծրագրին, թեկուզ փոքր նվիրատվություններով, մասնակից դարձնել մեր բոլոր հայրենակիցներին:

Հեռուստամարաթոն 2014-ի գլխավոր հովանավոր՝ **ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ**

«Հայաստան» համահայկական հիմնադրամ